

Զ Փ Ո Ղ Լ

(Նույր սպայ Քաքարիա Յ. Մելիք-Ամիրզադեանցին):

Ա.

Մածնաբերդցի Անդունց Սողին լուս աշխարհ տեսաւ Շատախայ գոմերում ¹⁾). Մի անգամ նրա մալր Սապեաը վաղ առաւօտեան ըստ սովորականին գնաց գոմը կովերին կթելու: Ցունուարն էր դրսում կանգնած. օրը շատ ցուրտ էր. ձիւնի հաստ շերտի տակ ծածկուած էին գոմերն ու կենալատները ²⁾). քամին սաստիկ փչում էր ու ձիւնի քուրաներն այս ու այն կողմը շպրտում: Իրսում ոչ մի կենդանի արարած չէր երևում. շներն անգամ քաշուել էին ներս ու իրանց սովորական հաջոցով էլ ոչոքի զահլա չէին տանում: Տաւարածներից ու հորթարածներից ոչ մինն էլ դրսում դեռ չէր երևում. նրանք յօդնած անվերջ պկու ³⁾) ածելուց ու պարելուց, որով գոմերում սովորաբար կարճացնում են ձմեռուայ երկար գիշերները, դեռ անուշ քնում էին. Նրանցից ոչ մինը դեռ չէր մտածույ գլուխը կարպետի տակից հանել. ինչու հանի ու գուր տեղը ցուրտ կուլ տալ. այսօր միւնոյն է տաւարը հան-

1) Գոմերը շինում են գիւղից դուրս արօտատեղիներից մօտիկ. այնտեղ գիւղացիները պահում են իրանց տաւարն ու ոչխարը: ²⁾ Կենալատունը շինում է մարդկանց կենալու համար, գոմից բոլորովին առանձին: ³⁾ Երաժշտական մի հասարակ գործիք է, որը շինում է ծղոտից:

դը⁴⁾ չեն գնալու արածելու. կարպետը թէև շատ չոր
է, բայց էլի նրա տակը փոքր ինչ տաք է: Դոմերում
առաւօտեան ալդ պահսւն արթուն են միայն բընըշի-
քը⁵⁾, որոնք շատապում են տաւարը շուտով կթել
հրեաին իրանց խեղճ գլուխներն ալդ զալմաղալից թա-
փել. ահր գոմերի բանը միայն տաւարը կթելը չի.
պէտք է խնեցի հարել⁶⁾ ու կարագը հալել, պէտք է
թանը կտրցնել⁷⁾, պէտք է վերջապէս այն շնթռնած⁸⁾
տաւարածների համար հաց շինել, որ գոնէ բարեհա-
ճեն տաւարին ապուռ⁹⁾ տալ ու զուր խմելու տանել
նրանց: Անդունց Սապետ աքիրն իրանց Նեօրմաթ կովի
ծիծը բռնեց թէ չէ, իսկոյն մի ինչ որ սաստիկ ցաւ
զգաց: Նա արդէն սպասում էր և լաւ գիտէր, որ ալ-
սօր էգուց իր գրուխն ալդպիսի մի օլին¹⁰⁾ է գալու,
բայց ոչ ալդքան յանկարծակի: Դեռ նոր էին ապսպա-
րել, որ գիւղից տատմէր¹¹⁾ գալ. ով էր իմանում, խա-
բարը գնացել էր գիւղը, թէ ոչ. տատմէրը գալու էր,
թէ գեռ իսկի տնից տեղահան էլ չէր եղել: Արդէն
բանը բանից տնցել էր. նա գար էլ, ալլ ևս ոչ մի բա-
նի պէտք չէր գալ, քանի որ Սապետ աքիրը, զգալով
ցաւն ու իմանալով բանն ինչումն է, ինքն իր գլխի
ճարը տեսաւ: Թողեց կթիչը¹²⁾ ձեռքից ու վազեց գո-
մից գէպի կենալատուն. բայց գեռ երկու քալլ չարած,
թուլացաւ ու ընկաւ մէջքի վրայ փափուկ ու տաք աղ-
բակուտի վրայ: Նրանցից աւելի լաւ անկողին կենալա-
տանը Սապետ աքիրը չէր գտնիլ. այնտեղ բացի չոր
կարպետից ու մաշած լանթերից բնչ կար, որ նա ինչ
գտնէր, իսկ ալդտեղ գոմում նրա տակը թէև տաւարի
թրիք էր, բայց փափուկ էր ու տաք: Մանուկը նեղու-
թիւն չէր քաշիլ, եթէ ալդ փափուկ տեղը ծնուէր:
Մնաց Սապետ աքիրը մի քանի րոպէ մէջքի վրայ ըն-
կած. ցաւի բռնկումը մի քանի անգամ սաստիկ զգա-

4) Արօտատեղին: 5) Կովերին կթող ու առ հասարակ
գոմերի անտեսութիւնը վարող կանայք: 6) Իւղ պատրաստել
մածնից: 7) Թանը եփել: 8) Պարկած: 9) Խոտ ու դարման:
10) Պատուհաս: 11) Մանկաբարձուհի: 12) Կթելու ամանը:

ցուեց. չը կար մէկը, որը Սապետ աքօր ձեռքից բըռ-նէր, նրան մի կաթիլ ջուր գոնէ տար, եթէ նա ալդ անտանելի ցաւից ուշաժափուէր. էլի ցաւի մի ուժգին բանկումն, և լանկարծ Սապետ աքիրը թեթևութիւն զգաց. աշխարհի կրկին լուսացաւ նրա համար, և նա աղբակոյտի վրայ ընկած տեսաւ մի փոքրիկ մանկիկ, որն իր թոյլ բազուկները մեկնած դէպի տարածութիւնը ճշում էր և կարծես գոմի սևացած կոճերից օգնութիւն էր աղերսում: Սապետ աքիրն իսկոյն իրան հաւաքեց, վերցրեց աղբակոյտի վրայից ճշացող մանկան, փաթաթեց նրան իր արխալուղի փէշում ու վաղեց կենալատուն, ուր փաթփթորեց նրան մի քանի հնամաշ լանթերի մէջ. Մանուկի ճչոցը քնահարամ արաւ Սապետ աքօր ամուսնուն, որը կարպետի տակ դէս ու դէս շարժուեց, դրիեց ¹³⁾ մին էս կողքը, մին էն կողքը ու յետոյ առանց գլուխը կարպետի տակից հանելու ձախ տուեց կնոջ. Շնչի, էդ ով ա էդտեղ զալմաղալ անում. ասաւ—տագ անի. դեռ քնից կշտացել չեմ:

— Րախէն ¹⁴⁾ ա էլի, — պատասխանեց Սապետ աքիրը:

— Ում րախալ ա, — հարցրեց ամուսինը:

— Մեր ըախէն:

— Պահ, աղջի, ըախէդ ըլաւ:

— Հա:

— Տղալ մ, թա աղջիկ:

— Տղալ ա, — պատասխանեց Սապետ աքիրը:

— Դէ Աստուծուն փառք, — ասաց կարպետի տակից ամուսինը, շուռ եկաւ միւս կողքի վրայ ու կրկին իր համար հանգիստ մրափեց:

Սապետ աքիրը հրեց ոտով հորթարած Կափոելին, որը դեռ արին քնումն էր, վեր կացրեց նրան քնատեղից, լանձնեց նրա խնամքին նորածին մանկան, իսկ ինքը գնաց գոմը տաւարը կթելու: Կափոելը ծանր-բարակ կրակ վառեց օջաղում, յետոյ վերցրեց լանթերի ալն փաթեթը, որի մէջ ամփոփուած էր նորածինը,

¹³⁾ Քորեց. ¹⁴⁾ Երեխան:

խտտեց նրան ու նստեց օջաղի ծալրին տաքանալու։
Ծիրի թանձը քուլաները բարձրանում էին օջաղից ու
լցնում ամբողջ կենալատունը։ Խեղճ մանուկը խեղդ-
ւում էր ծիփց ու բոլոր ոլժով ճչում։ Կափոելը փալ-
փալում էր նրան, ասելով՝ «լաց մի ըլիքը. քեւ մատաղ.՝
կը մեծանաս, գու էլ հորթարած կը գառնաս. կը բա-
ցուի սիրուն գարուն, և գու կը գնաս դաշտ այնտեղ
ձնծաղիկ քաղելու բլազուկների¹⁵⁾ համար։ Մանուկի
ճշոցն երբեմն մեղմանում էր, կարծես նա հասկանում
էր Կափուելի ասածներն ու ուրախանում, այդ գեղեցիկ
ապոգան իր առաջին տեսնելով։

Այդպէս լուս աշխարհ եկաւ Մածնաբերդցի Ան-
դունց Սողին։

Բ.

Միմեանց ետևից անցնում էին օրեր։ Սողին աղ-
բակոլտերի ու լանթերի մէջ մեծանում էր ու փարթա-
մանում։ Ծնուած օրից սկսած մի առանձին փալփա-
լանքի չէր արժանանում իր ծնողների կողմից, մի ա-
ռանձին հոգս չէր պատճառում նրանց։ Հալը երբեմն
վերցնում էր նրան ձեռքն ու մինչև օճուքը¹⁶⁾ բարձ-
րացնում, «Քօթիթ»¹⁷⁾ ու «առջուկ»¹⁸⁾ փաղաքշական
խօսքերը շռալիելով նրա հասցէով. ասենք, այնքան էլ
անտեղի չէին այդ ածականները, քանի որ փոքրիկ Սո-
ղին առջի քոթիթի պէս փափլիկ էր ու հաստիկ։ Նրա
ոտներն ու ձեռքերը միշտ թրքաթաթախ էին, քանի
որ յաճախ անխնամ մնալով կենալատանը, նա սողալով
գուլս էր գալիս այնտեղից ու աղբակոլտերի վրա խա-
ղում, կարծես արջի ղանում¹⁹⁾ լինէր նա մեծանալիս։
Մալը նրան ալնքան էլ երես չէր տալիս. երբ բանից
պըծնում էր, այն ժամանակ միայն նա միտն էր գցում
իւր Սողուն, վերցնում էր նրան, կուշտ ծիծ էր տալիս

¹⁵⁾ «Սորածին հորթերի։ Հորթարածները սիրում են
նրանց զարդարել ծաղիկներավ։¹⁶⁾ Գերանները։¹⁷⁾ Արջի
քոթոթ։¹⁸⁾ Փոքրիկ արջ։¹⁹⁾ Որջում։

ու կըկին բաց թողում նրան սողալու մի աղքակոյտից
միւսը։ Սողին լաւ էր ծծում. պտրզ երևում էր, որ
Անդունց տնից է։ Անդունք առ հասարակ շատակեր են.
Սողին, ինչպէս երևում էր, չէր ուզում իր նախորդներ.
ըից ետ մնալ ու Անդունց հոչակաւոր տոհմը սկ երես
անել։ Մարը զօռով էր ծիծը նրա բերանից հանում.
փուչը թամամ առջի քօթիթ էր. այնքան էլ ծծել
կըլի, որ ծծում էր։ Օրօրոցում Սողին չէր համբերում.
մի սուտ աչքահուփի տալուց յետոյ, իսկոյն բանում էր
աչքերն ու հարահուրէն գցում կենալատունը. օրօրոցի
կապանքները Սողու քէֆովը չէին. նա սիրում էր միշտ
ազատ իր հաստիկ ձեռքերն ու ոտները դէս ու դէն
շարժել։ Սապետ աքիրը, ճարը կտրած, վերցնում էր
նրան օրօրոցից ու բաց թողնում գետնի վրայ սողալու:
Երբ ազատում էին նրան օրօրոցի կապանքներից, նա
թոթուում էր մօր գրկում, կարծես երկնքից մի մեծ
պարզե իշած լինէր նրա համար։ Բաց էր թողնում
մալրը Սողուն կենալատունն, ու ինքը գնում էր գոմը
տաւարի թրիքը քերելու։ Նատ դէս ու դէն սողալուց
Սողին յոգնում էր ու տեղն ու տեղը քնում, յաճախ
խոնաւ գետնի վրայ։ «Զէ, ըախիս կողքը պինդ ա,—ա-
սում էր երբեմն հալրը, տեսնելով Սողուն ալդ գրու-
թեան մէջ, —լաւ տաւարած կըլի, ձիւն ու անձրևից,
թոռ ու թացից նրա աչքը չի վախիլ, սա թամամ իմ
պապ Արզմանի լոյն ա ընկել. նրա պէս կողքապինդ ու
հաստավիզ ա ըլելու։ Եւ ճշմարիտ. փոքրիկ Սողու թէ կող-
քըն էր շատ պինդ և թէ վիզն էր շատ հաստ, —ալդ արդէն
նշմարւում էր, թէն նա գեռ օրօրոցում էր պարկում։ Սո-
վին հիւանդանալու հետ իսկի գլուխ չունէր. փուչը կար-
ծես քարից լինէր շինած. հիէ գոնէ մի սուտ էլա հազում
չէր, որ ճնողները մի քիչ հալ ու մաշ լինէին, մի ըռեխ՝²⁰⁾
էլա «ջան» ասէին նրան։ Սապետ աքիրն երբեմն փա-
թաթում էր Սողուն չարսաւում, կապում էր իւր մէջ-
քին ու գնում էր գոմերից դուրս կանաչ մարգագետ-
նում ոչխարներին կթելու։ Կթիչը ձեռքին նա անցնում

20) Բերան։

էր մի ոչխարից միւսին, իսկ Սողին կպած նրա մէջքից, կամ հանդիստ իր համար քնում էր, կամ աչքերը բաց պլում էր գէպի գառները, որոնք խմբուած ոչխարներից հեռու, մայում էին անդադար ու գառնարածների գագանակներից ահարեկուած չէին համարձակում շարժուել իրանց տեղերից. նրանք անհամբեր սպասում էին իրանց հերթին, որ գան ու կաթ ծծեն իրանց մայրերի ծծերից. Յաճախ անձրևների տակ էր ընկնում մանուկ Սողին. մայրը կաթնի մեծ կթիչը ձեռքին բըռնած էլ չէր կարողանում նրան մէջքից վերցնել, գրկել ու թափել նրան անձրևից: Ճարը կտրած խեղճ Սապետ աքերը կթիչը երկու ձեռքով ամուր բռնած վազում էր գէպի գոմերը, իսկ անձրևը վերևից հեղեղում էր անխնալ նրան իր մէջքի բեռնով: Մինչև կենալատուն հասնելը խեղճ Սողու վրայ էլ չոր լանթի կտոր չէր մնում. նա այնպէս էր թռչում, կարծես գետից լինէր հանած իր վրալի շորերով: Մայրը հանում էր նրա վրայից լանթերը, մզում էր ու չորացնում օջաղի ծալըին, իսկ մինչև չորանալը Սողին բոլորովին տկլոր թաւալում էր կենալատան խոնաւ լատակի վրայ: Փուչն ասա հլէ մի սուտ էլա հիւանդանար. չէ, այդպիսի բանը նրան անմատչելի էր: Դրուստ էր ասում իր հայրը, որ նա իր պապ Սնդունց Արզմանի դօն էր ընկել, իսկ թէ իր ժամանակին ինչպիսի տղամարդ էր Անդունց Արզմանը, ալդ ամբողջ աշխարհին լայտնի է. Նա արջերի հետ անդամ կոխ էր բռնում ու յաճախ հասրակ գագանակներով էր սպանում նրանց: Ահ ու երկիւղ ասած բանը, քամին ու բորանը, ցուրտն ու սառնամանիքն Արզմանի համար գոլութիւն չունէին: Իր մազի համբարքով նա մարդ էր սպանել, միայն ոչ խեղճ ու անմեղ մարդկանց, ալլ գողերի ու դաշտաների: Դառչովեցի ձեղունց Վերդին էլ է շատ ազդուն²¹⁾ տղամարդ, նա էլ գողերի հետ գլուխ չունի ու պատահած ժամանակ հանդուցմերոց է անում նրանց ու գէպի այն հեռու աշխարհը ճանապարհ դնում, բայց էլի նա

²¹⁾ Ուժեղ, քաջ ու համարձակ:

Անդունց Արզմանին չի հասնիր. Արզմանը կատարեալ քափիւր էր: Ճեղունց Վերդին դեռ շատ պիտի պէծին-կրակին²²⁾ անիլ, դեռ շատ պիտի գիւլլա բարութ վաշցնիւ, չը տեսնուած քաջութիւններ պիտի անիլ նա, որ Անդունց Արզմանի ետնից հասնի. Արզմանի նանը չը մեռնի. նա մի ուրիշ տղամարդ էր...

Պ.

Երբ սողին սկսեց ման գալ, մայրը կտրեց նրան ծծից ու բոլորովին ազատ բաց թողեց նրան գոմերում: Սողին ամբողջ օրեր, ոտաբօբիկ ու գլխաբաց, շրջում էր հասակակիցների հետ աղբակոյտերի մէջ, թաւալում էր գետնի վրալ ու երեկոյեան թրքաթաթախ վերադառնում կենալատուն, ուր ուտում էր թան կամ մածուն ու պարկում կարպետի տակ քնելու: Առաւօտեան վեր կենալով տեղից, ուտում էր մածնի սովորական բաժինն ու գնում առուակի ափին գեօլ²³⁾ շինելու: Հաւաքում էր այնտեղ երեխաների մի ամբողջ բանակ: Նրանք առուակի ափին գեօլ շինելիս թրջում էին ու ցեխոտուում. մայրերն երեխն դալիս էին ու գլխներին բանիելով²⁴⁾ տանում նրանց տուն, բայց փուչերը չէին խրատուում. ազատուելուն պէս, կրկին վազում էին գէպի առուակն ու կրկին թրջում, ցեխոտուում այնտեղ: Դոնէ մինը նրանցից մրսէր ու հիւանդանար խրատուելու համար. այդ էլ չէր պատահում երբէք. փուչերը կարծես դանում մեծացած արջի քօթիթներ լինէին:

Ալդպէս անցնում էին Սողու անհոգ ու անդարդ մանկութեան տարիները: Բոլոր ժամանակ իր հասակակիցների հետ անձնատուր էր լինում նա ազատ խաղերի. նա ղեկավարում էր խաղերը, սւստի նրան ամենից շատ էին տուր ու դմբոց տալիս կանալք, երբ գալիս էին իրանց ցեխաթաթախ չարաճճիներին տուն տա-

²²⁾ Իր ոյժերից վեր պիտի աշխատի: ²³⁾ Լճակ. ²⁴⁾ Երկու ճեռքով խփելով:

նելու. Նրան էին մեղադրում միշտ այդ անվերջ ու անկարգ խաղերի մէջ, նրան էին պատճառ համարում: Երբեմն Սողին առաջարկում էր երեխանց «թուրք ու հայ չորանի»²⁵⁾ տալր՝ նրանք բաժանւում էին երկու խմբի. մի մասը թուրք հովիւների դերն էր կատարում, միւս մասը հայ. վերցնում էին նրանք մի-մի փայտ ու սկսում էին նախ վիճաբանութիւն. վէճը վերաբերում էր արօտատեղիներին, ուր թուրքերն իրանց տաւարը բերել էին արածացնելու: Մի քիչ իրար ըռեթի կրծելուց լեռոյ նրանք սկսում էին չոմաղակաիւ²⁶⁾). «խիզան, զբակեցէք»,²⁷⁾ ասում էր Սողին ու ինքն առաջինը յարձակում թշնամեաց բանակի վրայ. հարուածները կարկուտի պէս թափում էին սրա-նրա գլխին. արիւնով նախշում էին մարտնչողների երեսներն ու ճակատները, արիւնով ներկում էր գետինը, բայց խիզանը, ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով արեան վրայ, շտրունակում էին միմեանց զիկել: Շատերն ընկնում էին. միւսները նրանց կոխկրտելով, առաջ էին շարժում ու անխնայ աջ ու ձախ նի պլանում: Անգունց Սողին չը նալած իր արիւնաներկ քիթ ու պոօշին, գնում էր յանդգնութեամբ առաջ ու անդադար կրկնում «փիզան, զբակեցէք. Էնա համենք շնաշարդ ենք տալիս թուրքերին»: Բանը վերջապէս ալնտեղ էր հասնում, որ շատերը մարտընչողներից, կորցնելով թշնամու անխնայ հարուածներից իրանց բոլոր արիւութիւնը, աղիողորմ ձախնով «վայ, նանէ» էին կանչում, հասկացներով ում հարկն է, որ բաները խարաբ են, եկէք շուտով ու մեզ թափեցէք: Նրանց լացն ու կոծը հասնում էր բընթշների ականջներին: Խեղճ կանալքը, իմանալով բանն ինչումն է, ձգում էին իսկոյն բան ու գործ, վազում էին իրանց շարաճճիների մօտ ու քարսաղի²⁸⁾ անօւմ նրանց: Բոլոր մարտնչողներն էլ անխաիր, թէ յաղթողները և թէ յաղթուածները, լաւ քօթակ էին ուտում իրանց մալբերից, որ էլ չը համարձակուեն իրանց քիթ ու պոօշն արնացնել ու

²⁵⁾ Հովիւ. ²⁶⁾ Սկսում էին դադանակներով կոռւել.

²⁷⁾ Զփեցէք. զփել—խփել, զարնել. ²⁸⁾ Հանդարտացնում:

Նրանց բանից գցելու Ամենից շատ քօթակւում էր Անդունց Սողին, այդ լանգուագն զփողը²⁹⁾, Ղեկավարութիւնը շատ թանգ էր նստում նրան: Սապետ աքիրը, դրդուած բընիչների գանգատներից, անխնայ տուր ու զմբոցով խրատում էր նրան, որ խելօք կենալ, էլ էդհէնց խելառ. մելառ³⁰⁾ խաղեր ըըսարքի խիզանի հետ Սողին ալդպիսի դասերից լետոյ աշխատում էր իրան հանդարտ պահել. բայց ինչ անէր խեղճը, երբ նրա ջանը, ձեռքն ու ոտքը կոռուի համար միշտ քոր էին գալիս: Նրա ոսկորները չեն դնջանում. անցնում էր միերկու օր, նա կրկին հաւաքում էր երեխանցն իւր շուրջ, բաժանում էր նրանց խմբերի ու «խիզան, զբիեցէք» ասելով, առաջ շարժւում իւր խմբի գլուխն անցած: Զը նայած նոր ու աւելի ահոելի քօթակներին, նա իւր ալդ խաղերից ձեռք չեր քաշում երբէք:

Պ.

Մի անգամ, հնձի ժամանակը, Սողու հայրը դարձաւ Սապետ աքօրն ասելով՝ «ա կնիկ, հիմա մեր բանի թիւնդ վախտն ա, էսօր էն օրն ա, որ վիտին փալաս են փաթաթում ու բանեցնում, իսկ մեր փուչ Սողին ալստեղ գոմերում զուր ուտում ա և խմում ու սրա. նրա քիթ ու պուշ արինլիկ անում³¹⁾. էսօր նա տասը տարեկան բախալ ա, էսօրուանից պէտք ա նրա միսն ուտել, ոսկորը թողնել, աչքը հանել ու բանեցնել. բաւական ա, լաւ բոլ նա էստեղ գոմերում դէս ու դէն խնդուողի³²⁾ տուաւ. ինչ կասես եթէ նրան տանեմ սարն ալնտեղից մեր ջորով խոտ ու խուրձը կը նա շէնը:

—Ի՞նչ պտեմ ասիլ, տանում ես, տար, —պատասխանեց Սապետ աքիրը, —երբ հնձի և կալ ու կուտի ժամանակն անցնի, էն վախտը կըգալ ալստեղ գոմերում հորթերը պահելու. եթէ պարապ թողնենք, բէդօվ-

²⁹⁾ Խփողը, զարնողը, կռուողը. ³⁰⁾ Ցիմար. ³¹⁾ Արիւնով ներկում. ³²⁾ Վաղվղեց:

լաթ³³⁾ ու վէճլուկ³⁴⁾ տղայ կը դառնալ:

—Հա, հա, ըզորմի քու հօրն, ա կնիկ, —պատասխանեց նրան ամուսինը, —բէդօվլաթ կըդառնալ, եթէ պարապ մնալ. հիմա նրան լծան տակ քաշելու վախտն ա:

Մեր անվեհեր զփողին լծան տակ քաշեցին: Սողին լաց ու կոծով թողեց իր գոմերը, իր սիրելի աղքակոլտերն ու գնաց հօր հետ սարը այնտեղից խոտ ու խուրձ կըելու շէնը: Սկսուեցին խեղճ Սողու համար չարքաշ օրեր. էլ հանգստութիւն, էլ դինջութիւն չունէր նա, կաթ ու մածնի համ շատ հազիւ էր նա տեսնում. նրա ուտելիքը չոր հացն էր. երբեմն ճանկ էր գցում թթու շուշան կամ պէքի³⁵⁾: Հայրը բեռնում էր ջորուն խոտ կամ խուրձը, Սողին տանում էր տուն: Նա գնում էր ոտաբորիկ ու գլխաբաց. վերևից արևն էր դաղում նրա գլուխը: ցածից քարերն էին ծակծկոտում նրա ոտները: Նրա իսկի վէջէն³⁶⁾ չէր ալդ. ալդ անլարմարութիւնները ոչինչ բաներ էին նրա համար. նրա դեռ այն ժամանակը չէր, որ ոտնամաններ ու գլխարկ ունենալ: Մենակ հօ նա չէր. նրա ընկերները, խոտ ու խուրձ կրողները, բոլորն էլ նրա օրի խիզան էին, բոլորն էլ համարեա ոտաբորիկ էին ու գլխաբաց: Ծնողներն աւելորդ էին համարում նրանց համար ոտնամանների ու գլխարկի ծախսեր անել: «Երեխէք են, դեռ խուրդա-մուրդա խիզան են³⁷⁾», —ասում են սովորաբար նրանց ծնողները, —թող բորբկ ոտով քարին քացի տալով մեծանան, որ իմանան եղը մածնիցն ա, որ վերջը աշխատանքի լադրը³⁸⁾ գիդենան. եթէ ջահիլութիւնից նրանց պահես, պաշտես, սև օրից հեռու պահես, նրա ամեն ուզածը կատարես, շուտով գլխիդ աղա կըդառնան ու քո տուն ու տեղը կըքանդեն. էն վախտը նկ ու էշը փխակից հանի. գէ տեսնեմ, ոնց ես դու էշը փխակից հանում, երբ ջահիլութիւնից գու նրա կապը քո ձեռքից գցել ես: Էշը հակառակ հալվան ա. նա

³³⁾ Անպիտան. ³⁴⁾ Չար, ինքնագլուխ: ³⁵⁾ Բոկ. ³⁶⁾

Ուշ չէր դարձնում. ³⁷⁾ Մանր. մունը երեխաներ են. ³⁸⁾

Գինը, նշանակութիւնը:

եթէ իր գլխու մնար, տիրօջն էլ բանի տեղ չի դնիլ, քամակը դէպի նրան կանի ու քացի կըտալ ըռըխին. թամամ նրա պէս հակառակ են լինում երես տուած ջահիլները. Ել խի ենք մենք նրանց երես տալիս. ջահիլ միսն ուտել պտես, ոսկորը թողնիլ, որ նա շիտակ ու խելքը գլխին մարդ դառնար: Սողու հալը նրա ջանին ըլած ուտում ու մաքրազարդում էր նրա միսը. խեղճ ոչ թէ միայն ցերեկը, այլ գիշերն տնդամ հանգըստութիւն չունէր: Երեկոյեան մի ալին-օլին չոր հաց կրծելուց լետոյ նա պարկում էր կարպետի տակին քնելու: Դէ յալտնի է, որ զահըմար կարպետի տակին մարդ հանգիստ քուն չի ունենում. տակդ չոր, վերևդ չոր, կարպետի արանքներում լուաներ, որոնք ջանիդ ըլած արիւնդ ծծում են, — ոնց դու հանգիստ քնես, հէնց էնա քեզ քորում ես ու զրփում և դէս ու դէն պարանում: Աչքդ մի քիչ հուփ է գալիս, քաղցը երազի մէջ ես ընկնում, տեսնում ես քեզ քնած փափուկ եօրդան — գոշակի մէջ, տան պուճախում, այլ ոչ թէ աստղերանց տակին. մնել ես տեսնում, մի բան կողքդ ծակեց, քնահարամ ես ըլում ու տեսնում քեզ չոր կարպետի մէջ փաթաթուած: Աչքերդ կրկին հուփ ես ունում ու մի հանգաւ մրափում, բայց էն զահըմար երազը, էն փափուկ եօրդան-գոշակն էլ չես տեսնում, գնում է երազդ և չը գիտես՝ որ սևատակ է կորչում: Ե՛, գեռ լաւ է, երբ վերեւում փալյում են աստղերը կամ լուսինը. երբեմն երկինքը ծածկում է մութ ամպերով. ծլլալով թափուում է անձրւն ու քեզ քո կարպետով շան օրն ու շան հալը գցում: Կուչ ես գալիս կարպետիդ տակին, ձեռքերդ ու ոտներդ քեզ հաւաքում, իսկ վերևից թիկթիսկալով ընկնում են անձրւի անվերջ կաթիլները կարպետիդ վրայ ու կամաց կամաց նի նստում. թրջուում է կարպետը, թրջուում են շորերը. ջուրն արդէն մարմնիդ է հասնում: Ճար չի կալ, մրափում ես ու մի քաղցը երազի մէջ ընկնում. յանկարծ մի սառը բան է անցնում լաշովդ. վեր ես թըռչում և ինչ ես տեսնում. ջուրն արդէն հոսում է տակով: Կանգնում ես տեղից, կարպետն ուսերիդ գցում,

խուրջինի մի թալը գլուխդ պրծացնում, թամամ վրդապետ դառնում ու գնում այն խաւարի մէջ մի չոր տեղ գտնելու, որ կրկին կարպետում կօլոլուես, քարը գըլխիդ տակին զնես ու պարկես: Յաճախ չոր տեղ չի գտնում, սարին ովկ է տուել չոր ու ցամաք տեղը. ճարդ կտրում է, կանգնում ես մի տեղ ու արդպէս կտնգնած լուսացնում: Ե՛, էդ բոլորը լաւ է, շատ լաւ. ամառ ժամանակ հեշտ է արդպէսի պատուհաններին դէմ կենալը: Աստուած հեռու տանի ձմեռը, եթէ թէժ կրակ չունես արած, այն ժամանակ հանդին կարպետում փաթաթուել ու պարկել չես կարող. եթէ արդպիսի ախմախութիւն անես, էլ առաւօտը տեղիցդ վեր չես կենալ, կըսառչես ու սառոյց կըկտրես, Բա ինչ հողը գլխիդ տաս. էլ ինչ ա մնում անել. ճարդ կտրած շուռ ես ունում կարպետն ու մինչև լոյսն առանց դաւալի պար գալիս. որ չը սառչես, մի փոքր էլա տաքանաս, զուռնէն էլ դու ես քո ըռըխովն³⁹⁾ ածում:

Մանկութեան առաջին օրերից սովոր լինելով չոր կարպետին, Սողին սարին ալնքան էլ նեղութիւններ չէր քաշում կարպետի տակ, լաւ էր քնում. բայց ամեն գիշեր գեռ արին քնումը, գեռ լոյսը չը բացուած. հալը հրում էր նրան, ասելով՝ «աղա, լաւ բօլ քնեցիր, վեր կաց, խոտը աար տուն, ջորուն բեռնում եմ. ջահիլ տղէն էդքան կը քնիք. բա դու աշխարհումս ոնց պտես ապրիլը: Աշխարհումս ապրել սովորելու համար Սողին իսկոյն վեր էր թռչում տեղից, կարպետը ճալում ու ջորու կապը բռնում: Հալը բեռնում էր ջորին ու Սողու առաջն անում. տասնամեալ խոտ կրողը գեռ քնաթաթախ, աչքերը տրորելով գնում էր նրա ետակից: Պատահում էին թռու ու թաց գիշերներ. կարպետի տակ արդէն թրջուած ճանապարհին նա ևս աւելի էր թրջուում ու ցեխոտւում. բայց ալդ նա մի բանի տեղ չէր գնում. շտապով քշում էր ջորուն, որ հրետին տուն հասնի ու մի ուտելու բան ճանկ գցի իրանց հարսի ձեռքից, որը տանտիկնութիւն էր անում Սա-

³⁹⁾ Բերանով:

պետ աքօր բացակալութեան պատճառով, նա միշտ մը-նում էր գոմերում։ ծանապարհին նա շատ ընկերների էր պատահում, որոնք նոյնպէս խոտ ու խորձ էին կրում տուն։ Ինոնած ջորիներն ու ձիաները կազմում էին մի մեծ քարվան։ Երեխաներն ուրախ-զուարթ գնում էին նրանց ետևեց։ Նրանք անընդհատ երգեր էին երգում, կարծես թռչուններ լինէին ծլվալիս։ Սո-ղին մի շատ տարօրինակ սովորութիւն ունէր. նա ոչ ոքի թոյլ չէր տալիս, որ իր առաջին գնալ. անխնայ մտրակելով իրանց ջորուն, նա առաջ էր գցում նրան, միշտ առաջ, իսկ ամբողջ քարվանը մնում էր նրա ետևում։

Նրանց թառլան ջորին շատ նամուսով էր. մի-երկու հարուած ստանալով նա իմաստունի պէս ըմբռո-նում էր Սողու միտքն ու առաջ ընկնում։ «Ի՞է քե մա-տաղ, Թառլան, հա, — բացականչում էր Սողին, — գնա արխային առաջ։ Անդունց Սողին ուրիշների քամակում մնացող տղայ չի»։ Թառլան ջորին առաջ ընկնելիս բեռ-նած ուրախներին երբեմն հրում էր մի կողմ իր վրալի բեռ-նով։ Նրանց ուղեկցող խուրձ կրողները բողոքում էին, ուշունցներ էին առաքում Թառլան ջորու տիրօջ հաս-ցէով ու ձայն էին տալիս Սողուն՝ իր ջորու ըռեխը պա-հել։ Փոխանակ ջորու ըռեխը պահելու Սողին հայո-լանքներից վիրաւորուած, ինքն էլ փոխադարձաբար նոյնպիսի հաճոյախօսութիւններ էր ասում նրանց։ Սկսում էր վիճաբանութիւն, որը յաճախ վերջանում էր զփոցով⁴⁰⁾։ Սողու դադանակը վեր ու վալը էր շարժւում օդի մէջ ու ամեն անգամ սրա կամ նրա կարկաժին իջնում։ Նատ սակաւ էր պատահում Սողուն լաղթուել. նա առհասարակ յաղթող էր հանդիսանում, քանի որ նա շատ ուստա զփող էր, նրա դադանակն ա-ռանց հարուածի չէր իջնում. գոմերում ահը էդ էր նրա փէշակը վաղ մանկութիւնից սկսած։ Խուրձ կրող երե-խաները տեսան, որ Սողուն դադանակաթակ տալը հա-նաք բան չի, որ նա նրանց պէս երեք չորսի առաջ

⁴⁰⁾ Կռուով։

կանի ու զիելով դէպի ուր ուզում է քշի, ուստի ամեն սհաթ նրա հետ չէին վիճում, թողնում էին նըրան իր Թառյան ջորու հոգին հանել ու առաջ քշել: Չէ, չէ. էլի մին էլ տեսար զփոց պատահեց, մին էլ տեսար սրա-նրա քիթ ու պոօշ արիւնլիկ եղաւ: Երբեմն պատահում էր Սողուն արիւնաթաթախ գնալ սարը հօր մօտ: Նկատելով արիւնն ու հասկանարով բանն ինչումն է, նա բարկացած ասում էր որդուն՝ «ա գըլիսմեռ, էլ դու կոփւ գցեցիր, բա բոլ չէր, հերիք չէր քեզ. էս սարին էլա դու գինջանալու չես. ահը էդ ինչ պատահեց, որ դու չը կարացիր քեզ հաւաք պահելր:

—Ապէր, Հուռունց Մակիչն ինձ ուշունց տուեց,
—պատախանում է Սողին:

—Բա դու նրան բնչ արիր:

—Ես էլ նրան զփեցի:

—Ա՛ դու ղալաթ արիթ, —պատասխանում էր հայրը, —կարում չէիր գաս ինձ ասես, որ ես էլ նրա հօրն ասեմ, որ նրա աչքը հանի՞: Էլ անես ոչ, թէ չէ ես էլ քեզ ըսհէնց կը զփեմ, ալ, —ասում էր Սողու հայրն ու մի քանի անգամ բամփում նրա գլխին ու չափալախներ թխում երեսին:

Նա խրատում էր Սողուն, որ նա զփելը թօքա անի. վախենում էր, որ որդու զփոցը վատ հետևանքներ ունենալ ու իրան տուգանքի տակ գցի: Ե՛, ինչքան էլ հայրը բամփում էր Սողու կարկաժին, նա էլի իր էշն էր քշում. պատահած տեղը զփում էր զորս դու պատուիրեցեր: Նրա հոչակը շուտով տարածուեց բոլոր խոռ ու խուրձ կրող երեխաների մէջ: Նրանք սկսեցին Սողուն յարգանքով վերաբերուել. էլ ամեն քեօրփա ⁴¹⁾ չէր համարձակում նրա հետ վիճել ու նրա վրա դադանակ բարձրացնել: Նրանց մէջ էլ նա ղեկավար դարձաւ. խիզանը լսում էին նրան ալնպէս, ինչպէս էր ալդ մի ժամանակ Նատախալ գոմերում: Մի անգամ, չեմ իմանում ինչպէս ալդ պատահեց, Սողին վէճի բռնուեց Տօմբրունց թուրքի հետ: Նա մի ջահիլ

⁴¹⁾ Մանուկ:

թուրքի տղալ էր, Սողուց մի երկու տարով մեծ, նոքար էր Տօմբրունց տանը. նրանց համար խոտ ու խուրձն էր կրում: Վէճն ըստ սովորականին վերջացաւ զփոցով. թուրքը բռնեց իր խանչալի կոթից ու գագանակը շարժեց. Սողին մի քանի քայլ ետ գնաց, երկու ձեռքով բռնեց իր դագանակի կոթից, ետ տարաւ դագանակը, յետով մօտ վազեց թուրքին ու այնպիսի որժով իջեցրեց նրա գլխին դագանակը, որ խեղճ թուրքի տղան տեղն ու տեղն արիւնաթաթախ ընկաւ: Նա էլ չը կանգնեց տեղից: Սողին հանգիստ իր ճանապարհը շարունակեց: Ետնից եկող երեխաները վեր կացրին թուրքին ընկած տեղից, փաթաթեցին նրա գլխի վէրքն ու իրանց հետ տարան գիւղը: Խեղճ թուրքի գլուխը պատռուել էր ու բաւականին արիւն գնացել: Նա տեղի տակ պարկեց, էլ չէր կարողանում բանի գնալ: Տօմբրունց Քիքին, որը պահում էր թուրք նոքարին, գնաց ու գանգատուեց տանուտէրին: Նա էլ վեր կացաւ, գնաց սարը, տեղն ու տեղը իմացաւ եղեյութիւնն ու հրամալեց Սողու հօրը, որ նա իր անհանգիստ որգու հիզն ⁴²⁾ ու թողը սարից կորցնի, նրան բոլորովին հեռացնի այնտեղից: Խեղճ հալը Սողու գլուխն ու արեը հողելով ու գլխին անխնալ բամփելով, ուղարկեց նրան կրկին Շատախալ գոմերը, իսկ ինքն սկսեց խոտ ու խուրձ կրել, հազար ու մի նեղութիւններ քաշելով:

Ե.

Սողին գնաց գոմերը, ուր նրան էլ չը թողեցին պարապ-սարապ ման գտա. մալրն ուղարկեց նրան հօրթեր պահելու: 0՝, ինչ հրաշալի բան է հօրթարածութիւնը. միշտ աղատ ու անհոգ հօրթերն առաջդ արած, վազվզում ես կանաչ հովիտներում ու ծաղկազարդ դաշտերում: Երբեմն հօրթերը քամի են վերցնում ու հկէտ անում», կալծակի արագութեամբ փախչում մի կողմի վրայ. դագանակդ առնում ես ու նրանց

⁴²⁾ Հետքը:

ետևից վազում. հասնում ես, առաջը կտրում ու ետ փախցնում դէպի մնացած հորթերի խումբը: Պկուն էլ իր զոնամանով ⁴³⁾ միշտ պատրաստ է փափախիդ ծալում: Երբ հորթերը խաղաղ արածում են կանաչազարդ մարգագետնում, նստում ես մի տեղ, հանում ես փափախիդ ծալիցը պկուն ու զոնամանը, սարքում ես ու սկսում զաւալի պէս պկուովդ զուռնա ածել: Երբ սովում ես, էլ գնում չես մօրդ երեսը կտրում, թէ՝ անան, հաց տուր, ու երկար ու բարակ սպասում, որ գնայ տաշտից հաց հանի ու քեզ տալ. չէ, երբ հորթարած ես, տոպրակը միշտ կախած է լինում ուսիցդ հացը մէջին. գնում ես աղբը մօտ, մի կտոր հաց գցում նրա մէջ, լաւ թրջոց գնում. հացը փափկում է, կարծես նոր լինի թոնրից հանած. իշտահով կծոտում ու ուտում ես, լետոյ կուանում ես աղբը մի լաւ ջուր խմում ու կըկին պկուն. ըսթխումդ առնում:

Սողին վազուց երազում էր հորթարած դառնալ: Երբ նրան գոմերից տարան սարը, ալդ պաշտօնին արժանանալը նա մի ցնորք էր համարում. նա կարծում էր, որ հալրը սարի բանը վերջացնելուց լետոյ նրան կուղարկի գութանը հօտաղի պաշտօնով, իսկ այնուհետև, երբ ձիւնը դայ, կուղարկեն նրան գոմերը տաւարի թրիք քերելու: Հորթարած դառնալը բոլորովին մի անսպասելի պարգև էր Սողու համար. ողորմի ծօմբը թուրքի հօրը. եթէ նրան սարի ճանապարհին նա չը զիէր, խոտ ու խուրձ կրելուց նա գեռ երկար չէր աղատուիլ:

Երբ առաջին անգամ Սողին քշեց իրանց հորթերը դաշտն արածացնելու, ընկերները շրջապատեցին նրան ու հետաքրքրութեամբ հարց ու փորձ արին, թէ ինչ է պատճառը, որ նրան ալդքան շուտ սարից ետ ուղարկեցին գոմերը. ահր նրանք կարծում էին, թէ Սողու երեսն էլ չեն տեսնելու, ալդ պատճառով շատ

⁴³⁾ Զոնաման—պկուի աման. նա ունի ծակեր, ինչպէս սրինդը. պկուի ներքեսի հայրը գնում են նրա մէջ ու յետոյ ածում:

Էին դարդ անում, շատ էին տափերը պոկում։ Սողին հաւաքեց հորթարածներին իր շուրջն ու սկսեց իր պատ մութիւնը։ Ալտա, մի օր սարկեց մեր թառան ջորովը խոտ էի բերում։ ջորուն առաջս արած քշում էի. թող չէի անում, որ մինը գոնէ իմ առաջին գնալ. ես լոխի⁴⁴⁾ առաջն էի ընկնում. գնացի ու Հարսհանգստի գլխվերում Տօմբը ունցից թուրքի ետևից հասալ. նա էլ Տօմբը ունց համար էր խոտ կրում։ Թէև նա ինձանից մեծա, ամա ես նրանից իսկի չէի վախենում. դագանակիս գլխում նոր էի էս մեխը վեր տուել⁴⁵⁾), հրէս է, տես նում էք, — ցոլց է տալիս դագանակի գլուխը ընկերներին։

— Ա՛ թուրք, — ասացի ես, — ջորեդ զբաղ քաշի, թող ես անց կենամ։

— Խի՞ ես անցկենում, — հարցը ունա։

— Ուզում եմ առաջ ընկնել, — ասացի ես։

— Ում առաջ։

— Քո։

— Խի՞ իմ գլուխը մեռել ա, որ թողնեմ մի սարսաղ հալի լակոտ իմ առաջն ընկնի, — ասաց նա։

— Ա՛, թուրք, Բնչ, Բնչ, — հարցը ի ես, — մի էգ մնէլ ասա։

— Ալ չոռն էդ պինչդ. Խի՞ գիտես, թա քեզանից վախում եմ ես։

— Բա համ եկել ես մեր սարերն, համ էլ մեզանից վախում չեմ. դու մգամ քանի գլխանի ես, — հարցը ես։

— Բա հարամ չի թուրքի կերածը, որ նա հալից վախենալ. հայն էլ մի իսան ա, որ մարդ նրանից վախի. ես հալի էն....

Թուրքն ուզեց ուշունց տալ, բալց էլ վրալ չի հասցըց։ — Ի՞նչ արիր, ա Սող, ասա մի շուտով, — համբերութիւնը կորցրած հարցնում են հորթարածները։

— Են ա էն արի, խիզան, — շարունակում է Սո-

⁴⁴⁾ Բոլորի. ⁴⁵⁾ Դագանակի ծայրին լինում է բռունցքի չափ մի գունդ. գնդի մէջ խիում են մեխեր։

զին, —որ թուրքը քիչ մնաց, թէ հանգուցմերոց ըլի:

—Ի՞նչ արի՞ր, արմա:

—Մի քիչ ետ թռայլ, երկու ձեռքով դադանակիս կոթից պինդ բռնեցի, նի վազեցի թուրքին, դադանակս յետ տարայ, բալամ⁴⁶⁾, որ զփեցի⁴⁷⁾, թուրքը տեղն ու տեղը շնաթաւիլ տուաւ ու գոռոցը գցեց էն ձորերը:

—Արա, բա թուրքն էլ տեղից վեր չը կացաւ:

—Զէ, լաւ էի զփել:

—Արա, որտեղին զփեցիր:

—Կարկամին⁴⁸⁾). դադանակիս մեխը թուրքի գը-

լուին էր պլծել:

—Արա, բա դու ոնց նրանից պլծար, —հարցնում են Սողուն:

—Ո՞նց պտի. վեր էլ կենար, նա ինձ կարող չէր ոչինչ անի. ես ջորիս առաջ գցեցի ու քշեցի տուն, —պատասխանում է Սողին:

—Նալալ ըլի քու կերածն, ա Սող, —ասաց նրան ընկերներից մինը, —էդ թուրքին զփելն ի՞նչ ասես, արժի, աշը նրանք մեզ ամեն տեղ, թաքուն, աշկարայ, միշտ զփում են. հարկաւոր ա, որ կէնդ-կէնդ էլ մենք նրանց զփենք: Ալդ պատմութիւնից յետոյ Սողու հեղինակութիւնը աւելի բարձրացաւ ընկերների աչքում, որոնք թէկ գիտէին զփել, բայց ոչ նրա պէս. Անդունց Սողին մի ուրիշ, մի զարմանալի զփող էր:

Զ.

Անցնում էին ալդպէս տարիներ: Սողին մեծանում էր ու զնալով միշտ առաջադիմում զփելում: Ծնողներն երբեմն ստիպուած էին լինում հեռացնել նրան գոմերից, ուր նրա կոփւներին վերջ չէր լինում: Նրան ուղարկում էին գութանը հօտաղութիւն անելու, եղնարածի⁴⁹⁾ ու մաճկալի⁵⁰⁾ ձեռքի տակ խրատուելու: Գոմերը մի քիչ խաղաղում էր: Հորթարածների կոփւներ

⁴⁶⁾Բարեկամ, ընկեր. ⁴⁷⁾Խփեցի. ⁴⁸⁾Գլխին. ⁴⁹⁾Եղներն արածացնողի. ⁵⁰⁾Գութանի մաճը բռնողի:

թէս պատահում էին, բայց ալնքան էլ քիթ ու պռօշ չէր արիւնող ներկւում, քանի որ կուռողների մէջ չէր լինում քաջարի զփողը: Գութանում իեղճ Սոզու գլխին շան օլին էին գնում: գեռ մութ-մութ եղնարածը գա-լիս էր ու նրան էլ միւս հօտաղների հետ կարպետի տակից գուրս քաշում ու գեռ քնաթաթախ լծան վրայ գնում: «Վարի, բալամ ջան, նանը զուլեմ» ⁵¹⁾, ասում էր Սողին ըմբիլ ⁵²⁾ եղան, որի լծան վրայ նստում էր նա ու առաջ քշում: Եղները, մոընչալով, առաջ էին շարժում. հօտաղներն սկսում էին իրանց գօրօն ⁵³⁾ նրանք երգում էին:

Հոռօլօ-լօ, վարի, բալամ ջան, հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, ըմակիդ զուրպան, ⁵⁴⁾ հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, նանիդ մատաղ, հօռօլօ-լօ,

Հոռօլօ-լօ, տափը ճղի, հօռօլօ-լօ,

Հոռօլօ-լօ, ծիր ⁵⁵⁾ տու ծրենք, հօռօլօ-լօ,

Հոռօլօ-լօ, հաց գալ, ուտենք, հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, ծնողիդ մատաղ, հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, ծաղիկ եղը, հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, Քեալչա աչառ, հօռօլօ-լօ,

Հոռօլօ-լօ, նաղաշ եղը, հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, ճումբը կիւտի, ⁵⁶⁾ հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, մոընչոցիդ մատաղ, հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, նանը զուլեմ, հօռօլօ-լօ.

Հոռօլօ-լօ, ջանիդ զուրբան, հօռօլօ-լօ...

Հօտաղների երգերը, գօրօն, քաջալերում էին եղ-ներին. նրանք մոընչալով առաջ էին շարժում. խոփ ու ձևիչը փալլում էին ու ակոսներ անթիւ, անհամար միմեանց ետեից փորում: Երբեմն պատահում էր, որ հօտաղներից մինը ննջում էր լծան վրայ ու ընդհա-տում իր գօրօն. մաճկալն առանց երկար ու բարակ

⁵¹⁾ նանիդ մատաղ. ⁵²⁾ Առաջին լծան եղան. ⁵³⁾ Հօ-տաղի երգ. ⁵⁴⁾ Աշխատանքիդ մատաղ. ⁵⁵⁾ Ակոս. ⁵⁶⁾ Հողի ճմբերն իրար վրայ դիր:

մտածելու վերցնում էր ցելից ⁵⁷⁾ մի ահագին ճռում-
քըն ⁵⁸⁾ ու հօտաղին վիշքէշ ուղարկում։ ճռումքը գնում
էր ու նրա կարկաժին տրաքում։ ցնցւում էր խեղճ հօ-
տաղը, քիչ էր մնում, թէ լծան վրալից ընկնի եղանց
ոտների տակ։ քունն իսկոյն փախչում էր, նա էլ խել-
քըն իր գլուխն էր հաւաքում ու կրկին սկսում էր իր
գորօն։ Ալդպիսի նուէլներ մածկալից Սողին էլ էր
ստանում, զփում էր ճմբով զօրս գու պատուիրեցեր,
բայց ինչ նա կարող էր անել մածկալին, որին իրաւունք
էր տրուած նրա միսն ուտել, ոսկորը թողնել։ Յաճախ
պատահում էր հօտաղներին թռու ու թացի տակ ընկ-
նել։ Ի՞նչ կարող էին անել նրանք բաց դաշտում։ վե-
րևից թափում է անձրևը. փչում է ցուրտ քամին.
գիշեր է խաւար. թրջում ես ու զուրն ընկած հաւ-
դառնում։ տակդ ջուր է արդէն։ Մեր հօտաղները,
ճարները կտրած, թափում էին բոլորն էլ մի կարպե-
տի տակ ու իրանց շնչով տաքացնում իրաց։ Երբ այդ
էլ չէր օգնում, նրանք կանգնում էին տեղերից, Սողին
հանում էր իսկոյն իր փափախի ծալից պկուն ու զոնա-
մանը և սկսում է շեարակունին ⁵⁹⁾). հօտաղները ձեռք
ձեռքի էին տալիս ու սկսում եալին. ալդպէս նրանք
պարում էին մինչև լուսն ու պարելով տաքանում։
Խեղճ հօտաղ. նրա կեանքը քեափուրը չը քաշի. տարին
երեք անգամ միայն լուանում են նրա գլուխը՝ Զօրհ-
նէքին, Զատկին ու Վարդավառին, ու երկու անգամ
թափում են ⁶⁰⁾ թոնըրում նրա շորերը՝ Համբարձումին
ու սուրբ Խաչին։ Ճարող ա փիս սովորել, եթէ շատ
լուանաս ու սղալիս նրան, — ասում են ծնողները, — հօ-
տաղն իսկի հանդից տուն չը պիտի զար. գլուխ լուա-
նալն ու շորեր թափիլն նա ինչ անում. թաք հացը
բու ըլի, որ նա բօլբօլ ուտիր։

Դութանում բաւականին խրատուելով, Սողին, երբ
արդէն վարուցանքսից պրճնում էին, վերտառնում էր
գոմերը, ուր վերցնելով կրկին իր դագանակը, քշում էր

⁵⁷⁾ Վարած տափից. ⁵⁸⁾ Հողի կոյտ. ⁵⁹⁾ Պարի եղա-
նակ է. ⁶⁰⁾ Մաքրում են անասուններից։

Հորթերին հանդն արածացնելու։ Սողին կամաց-կամաց տղամարդի ջարդ ընկաւ։ Նրա համար առան փափախ ու կարեցին տրեխսներ։ «Չէ, մտածեց մի օր հայրը, — բաւական ա, ինչքան նա հորթերի ետևից գնաց. ժա- մանակ ա նրան տաւարած կարգելու, և Սողին տաւա- րած կարգուեց։ Տաւար պահելը դժուար է. կովեր ու եզներ են, շատ են ման գալիս, ամեն խոտի էլ հաւան չեն կենում. ջանդ դուրս գալով առաւօտից մինչև երե- կոլ ետևներից ման ես գալիս. հազարից մի անգամ ես ժամանակ գտնում պկու ածելու։ Սողին լաւ տաւարած էր. նրա առաջից ոչ մի կով կամ եզը չէր կորչում. կարծես նրանք վախենում էին զիողի սոսկալի դադա- նակից, որի գլուխն ամբողջապէս մեխերով էր ծած- կուած։ Ուրիշ տաւարածներ նրա արօտատեղիները չէին համարձակուում ամեն սհաթ էլ կոխել, քանի որ գի- տէին Անդունց Սողու հունարը, գիտէին, որ նրա ձեռ- քերը միշտ քոր են գալիս զիելու համար, իսկ նրա գահրիմար դադանակի գլխին էլ հօ բաց տեղ չի կայ. ամբողջը ծածկուած է մեխերով, որոնք մարդի գլուխ աշմա կանեն, եթէ գոնէ մի անգամ նրան դիփչեն։

Մի անգամ Սողին դարձաւ իր հօրն ասելով՝

— Ապէր, քու ջանին մատաղ, ինձ համար մի խան- չալ⁶¹⁾ առ։

— Ա՛ գլխամեռ, — ասաց հալրը, — խանչալ Բնչ ետ անում առնեմ, որ մարդկանց փոր կոխես. դագանակով զիելը բաւական չի քեզ։

— Կոխիլ չեմ, ապեր. դու խանչալն առ, — ասաց Սողին, — ես նրան իսկի ձեռը չեմ տալ. քամարիցս կա- պած կովահեմ սարքի համար, իսկ եթէ հանդին կոփւ պատահի էն վախտը գագանակովս եօլա կըգնամ։

— Դրուստն ասա, — ասաց հալրը, — խելքդ գլխումդ կըպահես. խանջալով չես կոուիլ ու ինձ ջարմի⁶²⁾ տակ գցիլ։

— Չէ, ապեր, չեմ կոուիլ, — պատասխանեց Սողին, — խելքս գլխումս կը պահեմ։

⁶¹⁾ Դաշոյն. ⁶²⁾ Տուգանքի։

— Իէ լաւ, ասաց հպլը, տեսնենք ո՞նց ես խելքդ
գլխումդ պահում։ Խանչալը կառնեմ։
Շուտով Սողին ստացաւ հօրից իր խանչալը։

Ե.

Շատ հպարտանում էր Սողին խանչալով, բայց նը-
րան գործ չէր ածում։ պատահած դէպջում եօլա էր
գնում գագանակով։ Խանչալը քամարից կապած նա գը-
նում էր տաւարի ետևից այնպիսի հպարտութեամբ,
կարծես ամբողջ աշխարհը նրան լինէին տուած։ Անցան
մի քոնի ամիսներ։ Սողին դիմեց հօրը մի նոր խնդիր-
քով։ Նրանից նա ուզեց հրացան ու ատրճանակ։ Հալը
մերժեց նրա խնդիրքն, ասելով՝ «գեռ գրանց վախտը
չի, դու առաջ մի խելքդ լաւ գլուխդ հաւաքիր, երբ
կըտեսնեմ քեզ կատարեալ տղամարդ դարձած, էն վախ-
տը կառնեմ քո ուզած բաները։ Հիմա թուանդ տամ
ձեռքդ, որ գնաս մինի գիւլլախորով ⁶³⁾ անես ու տունս
քանդես»։ Սողին խօսք տուեց հօրը կատարեալ տղա-
մարդ։ գառնալու Բայց նրա արջ տունը քանդուի. դեռ
մի երկու ամիս չանցած ալդ խոստումից, նա մի չըտես-
նուած ու չըլսուած զփոց սարքեց։ Էն էլ մըտեղ, եկե
ղեցում, Աստուծոյ իրան տաճարում։ Ծաղկազարդ կի-
րակին էր։ Սողին գնացել էր գոմերից գիւղը հաղոր-
դուելու։ Այնտեղ եկեղեցում կատարւում էր Ծաղկա-
զարդի հանդիսաւոր պատարագը։ Սողին իր օրում առա-
ջին անգամն էր պատարագ տեսնում։ Թէև առաջ էլ
նա հաղորդում էր երբեմն, բայց երբէք գիւղում պա-
տարագի չէր հանդիպած։ տէրը նրան հաղորդ էր տա-
լիս առաւտեան ժամին։ Սողին բոլորսին չը գիտէր,
ինչ բան է պատարագը։ Խանչալը քամարից կախած,
գագոնակը ձեռքին բռնած նա կանգնել էր եկեղեցում
ու աչքերը չուած, բերանը կիսաբաց, մեծ հետոքքը թեամբ
գիտում էր պատարագի արարողութիւնները։
Չորս կողմի մարդիկ երբեմն նայում էին Սողօւն, նրա

⁶³⁾ Գնդակահար։

խանչալին ու դագանակին, բայց ոչինչ չէին ասում,
թէև շատ անվայել էին գտնում նրա ալդ սարքերը
եկեղեցում։ Սողին զգում էր, որ իրանով անբաւական
են, բայց բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում նր-
անց վրայ։ Երբ պատարագին քահանան ողջոյն տուեց
վերևից, միւս քահանան ցած իջաւ սեղանից, ընդունեց
դոկիր Ղազարից ողջոյնն ու, ձեռքը հերթով մի քանի
մարդկանց գլխներին դնելով, ողջոյն տուեց նրանց, բայ-
լոր աղօթողներն ըստ սովորականին սկսեցին միմեանց
ողջունել, կրկնելով՝ «ողջոյն քեզ, եղբայր...»։ Սողին
շատ հետաքրքրուեց դրանով ու շատ զարմացաւ. նա
մի շատ տարօրինակ բան էր տեսնում իր առաջին. յան-
կարծ ոչ ալն, ոչ ալն, մարդիկ սկսում են միմեանց ա-
կանջին փսփսալ, ու ալդ փսփսոցը կամաց-կամաց նրան
է հասնում. նրա չորս կողմի աղօթողներն էլ արդէն
սկսեցին փսփսալ. «Չէ, այստեղ մի ստնութիւն կալ,—
մտածեց Սողին, — սրանք տէրի հրամանով խօսք են տա-
լիս իրար, որ յանկարծ իմ վրայ թափուեն ու մի յաւ
թակեն. երսի նրա համար, որ խանչալով ու դագանա-
կով եմ եխծին ⁶⁴⁾) մտել. դէ որ ըդհէնց ա, ես հրետին
իմ բանը տեսնեմ։ Մտածելն ու սկսելը մին արաւ մեր
Սողին. դագանակը բարձրացրեց ու կալծակի արագու-
թեամբ սրա-նրա կարկաժին իր շրջապատողներից մի-մի
հարուած իջեցրեց, ջարդ ու փշուր արաւ խեղճերի գը-
լուխներն ու նախշեց արիւնով նրանց ճակատները. ի-
րարանցումն ընկաւ եկեղեցին. պատարագը խանգարուեց.
Սողին դուրս թռաւ ու փախաւ. Շատերը դուրս թռան
եկեղեցուց ու նրա ետևեկից ընկան, շներ մինչև անգամ
քիս տուին, բայց ոչինչ չըկարողացան շինել. Սողին իր
թիզ ու թեփուռը կորցրեց, մի աչքաճպում նա Վարանի
ուեռը ⁶⁵⁾ կտրեց ու փախաւ, գնաց տաւարի մօտ Ղափ-
լան-դալի ծմակները. Ընկերներից առաջինը հանդիպեց
նրան կեափունց ჩէդին ու հարցըրեց՝
— Աղա, շինումն ինչ տեսար։

⁶⁴⁾ Եկեղեցին. ⁶⁵⁾ Վարանի սեռը — Մածնաբերդին կից
բլրակ է։

—Պտարագ տեսալ, ա Բեդ, պտարագ,—պատաս-
խանեց Սողին:

—Աղա, որտեղ:

—Եխծումը:

—Պահա, ընկրակ քու աչքերին, որ պտարագ ես
տեսել. աղա, պտարագին ով էր, —Հարցնում է Բեդին:

—Դիտում չեմ, ա Բեդ, պատասխանում է Սո-
ղին, —Երկու տէրն էլ ամաքը մի նախշուն եափնջի
շուռ կալած վերի զոլի սաքուին ⁶⁶⁾ կաղնած հարեդ-
դա ⁶⁷⁾ ժամ էին ասում. ներքի զոլին էլ մի բեօլուկ ⁶⁸⁾
ջահել-ջնուլ խիզան ⁶⁹⁾ ու մի մեծ տէրացու էլ նրանց
միջին կաղնած հէնց էնա մի ձէնի ծվվում էին, ըն-
հենց, որ խելքդ կը զնար, եթէ լսէիր:

—Աղա, բա դրօշտին ⁷⁰⁾ որ տէրի գլխին էր, չը տե-
սմը, —Հարցնում է Բեդին:

—Տեսալ, ա Բեդ. դրօշտին Միսիթար տէրի գլխին
էր, Միսիթար տէրի. —պատասխանում է Սողին:

—Էնա պտարագիչը նա ա ըլել, —ասում է Բե-
դին, —աղա, բա նրա կողքումն ով էր կաղնած ⁷¹⁾, —
Հարցնում է նա:

—Մեր տէրացու Ղազարն էր կաղնած, Ղազարը:

—Աղա, նա ի՞նչ բանի էր:

—Նա էլ մի սիպտակ լէհին ⁷²⁾ էր կեցել ու մի
ծխաման ⁷³⁾ ձեռքին բռնել. բազի վախտ ⁷⁴⁾ սեղանից
ուշը ⁷⁵⁾ խալխին էր գարձնում ու ծըխրմանաւը մին
սրա ըռըխին, մին նրա ըռըխին հարերդա ծուխ անում:

—Աղա, մասն ⁷⁶⁾ առաջ, Հարցնում է Բեդին:

—Զէ:

—Խի՞:

—Խի պտի. գլուխս մի օլին եկաւ, —պատասխա-
նում է Սողին:

—Աղա, էդ ո՞նց ըլաւ:

—Ա՛լ ո՞նց, —ասում է Սողին, —ես անմեղ ինձ հա-

⁶⁶⁾ Սեղանին. ⁶⁷⁾ Անընդհատ. ⁶⁸⁾ Խումբ. ⁶⁹⁾ Երե-
խաներ. ⁷⁰⁾ Սաղաւարտը. ⁷¹⁾ Կանգնած. ⁷²⁾ Շաբիկ. ⁷³⁾
Բուրվառ. ⁷⁴⁾ Երբեմն. ⁷⁵⁾ Դէմքը. ⁷⁶⁾ Հաղորդ:

մար կաղնած թամաշա էի անում պտարագին. մնել տեսնամ ժամի թունդ վախտը էն գլխամեռ Ղազարը վիրի դոլի սաքուէն գվէրեց քաշ ու Հանէս տէրին մի բան ասեց. նրան վիրի դոլէն Մխիթար տէրն ուղարկեց քաշ: Հանէս տէրը, Ղազարից վիրի դոլի խաքարն առնելուն պէս, ուշը ետ շդակեց, ձեռքը մի երկու մարդկանց գլխի դրաւ ու փսփսաց նրանց ականջներում: Մնել տեսնամ, փսփսոցը կամաց կամաց մօտենում ա ինձ. չէ, ասեցի, էստեղ մի բան կալ. սրանք իրար խօսք են տալիս իմ գլուխը թակել, որ համարձակուել եմ խանչալով ու դագանակով կանգնել եիծում: Քու նանը չը մեռնի, Անդունց Սողի, մգամ⁷⁷⁾ մեռել ես, որ սրանք կարան քեզ թակեն, — ասացի ես մտքումս ու յետով, ը՛հ ա հեդ, որ զփեցի մի քանիսի, տեղն ու տեղը խեղճերը պարանուեցին: Հարահրոցն ընկաւ ժամը. պտարագը փոզմիշ⁷⁸⁾ ըլաւ. «ադա, էդ հարամզադին⁷⁹⁾ բռնեցէք», — լսուեցին ամեն կողմից: մի քանիսն ընկան առաջս, որ բռնեն, բայց ես դագանակովս աջ ու ձախ զփելով դուրս թռալ եխծիկց ու մինչև ալստեղ մին փախար:

— Հալալ ըլի քու կերածն, ա Սող, — ասում է հեդին, — լաւ ես արել, նրանց հախն ա, որ զփել ես. նըրանք խի էին ուզում քու խանչալը խլեն ու քեզ թակեն:

— Զփեցի, ա հեդ, ամա հմի բարաթ⁸⁰⁾ խեղճ եմ դալիս նրանց:

— Խի:

— Ադա, նրանք էնքան էլ մեղաւոր չէին, — ասում է Սողին, — ստնութինը⁸¹⁾ վիրի դոլէն եկաւ է, վիրի դոլէն: Մխիթար տէրը երբ էն գլխամեռ Ղազարին ուղարկեց քաշ, բանն էն վախտից խարար ըլաւ:

— Դրուստ ես ասում, ա Սող, ստնութինը վիրի դոլէն ա եկել, ամա էլի դու լաւ ես զփել. նրանք խի էին Մխիթար տէրին լսում:

⁷⁷⁾ Միթէ. ⁷⁸⁾ Խանգարուեց. ⁷⁹⁾ Անպիտանին, անիւրաւին. ⁸⁰⁾ Մի բէչ. ⁸¹⁾ Սատանայութիւնը, խարդախութիւնը:

—Հա, ա Բեդ, զիտակ զիմեցի, —հպարտութեամբ պատասխանում է նրան Անդունց Սողին ու դադանակը ձեռքում խաղացնում:

Ալդ զփոցը Սողուն էժան չը նստեց: Հայրը երբ լսեց, մի ծէրատ⁸²⁾ առաւ ձեռքն ու խեղճի ջանին ըլաւ. էլ ոչ գլուխ թողեց, ոչ, ոչ մէջք, —հարերդանի պրանեց, ասելով՝ «զեռ դու ինձանից թուանդ ես ուզում. ալ քեզ թուանդ, ալ քեզ թուանդ», ասում էր նա ու հարուածներ մինը միւսից ուժգին իջեցնում Սողու կարկաժին:

¶.

—Ե՛, ըսհէնց տունքանդութին չը ըլիլ. Էս ինչ արի ես. Էն օրն էն ո՞ր սատանէն ուղարկեց ինձ շէնը մասն առնելու, որ էս օլինն իմ գլուխը գալ, —մտածում էր Սողին ծոծրակը քորելով, —հայրս ընհէնց որ բարկացել ա ինձ վրայ, էլ թուանդ չի առնիլ ինձ համար, զուր տեղը չի նա երդուեց: Ե՛, մեռած լաւ եմ, քան միշտ էսպէս առանց թուանդ մնացած. Ինչ կասեն իմ թալ ու թուշ⁸³⁾ տղէքը. Ինչ կասեն կեափունց Բեղին ու Կուշունց Կեալին. Նրանք արդէն ունեն թուանդներ ու պատրօնտաշներ⁸⁴⁾, որոնք լիքն են փըլստրատին⁸⁵⁾ տօնող պատրօններով. բա ես նրանց պէս տղալ եմ, որ իմ հայրն ինձ առանձ թուանդ ա թող. նում: Ա՛խ, Աստուած, ըշտա երբ թուանդն ուսիցս կը կախեմ ու պատրօնտաշը գոշէս կապէմ:

Մեծ էր Սողու գժբաղդութիւնն ու անբուժելի նրա վիշտը: Նա յուսով էր, որ Զատկից յետոյ հայրը նրա համար թուանդ կառնի. Նա մտագիր էր ալդպիսի խընդիրքով կրկին անդամ դիմել նրտն: Նրա սիրտն արդէն թրթռում էր ու հալումաշ լինում, երբ մտածում էր դրա մասին, կասես թագ ու պատկ էին կապելու նրա գլխին, կասես իր սիրուհուն է տեսնելու շուտով իր

⁸²⁾ Շատ հաստ փայտ. ⁸³⁾ Հասսակակից. ⁸⁴⁾ Փամփուշների պայուսակ. ⁸⁵⁾ Շողշողուն փամփուշներ:

կողքում կանգնած։ Ե՞ւ, ինչ բան է սիրուհին, ինչ բան
է ջահիլ տղի հոգին դաղող ջանի կրակը։ Նրա սիրու-
հին հրացանն էր իր շողշողուն փամփուշտներով։ այդ
սիրուհուն տիրապետելու համար էր նա այնքան դարդ
անում ու այնքան հալումաշ լինում։ Սողին արդէն
լայտնի զփող էր։ Նրա անունն արդէն լայտնի էր ամեն
տեղ։ Ինչ էր հարկաւոր նրան, որ ալլ ևս ոչոք չըհա-
մարձակուէր ասել, թէ աչքիդ վերևն ունք կալ, ալլ
ևս ոչ ոք չը կարողանար նրա առաջը քեօթուկ գցել։
Նրան հարկաւոր էին հրացան ու շողշողուն փամփուշտ-
ներ։ այդ էր նա երազում ունենալ։ այդ էր նրա սրտի
մուրազը։ Ե՞ւ, անցաւոր աշխարհ, եանի ինչու ես դու
այդքան փշոտ ու տատասկոտ։ երբ պէտք է վերջապէս
մարդ քո վրայ բաղդաւոր ու երջանիկ լինի մինչև մա-
հը։ Հերիք չէ, ինչքան դառն ու լորդառատ արցունքով
հեղեղուեցիր դու։ Հերիք չէ քեզ արեան վտակներով
ներկուել։ Ահք ով է մինչև օրս իր սրտի մուրազին հա-
սել, որ Անդունց Սողին հասնէր։ Հենց որ մարդու սըր-
տում մի խորհուրդ, մի բուռն ցանկութիւն է ծագում,
իսկոյն տեսնում ես, հազար ու մի արգելքներ կանգնե-
ցին նրա առաջ, իսկոյն նրա գլխին մի օյին, մի անըս-
պասելի աղէտ է գալիս։ Խնչու ես դու այդպէս անցա-
ւոր աշխարհ, ասա՛ ով է մեղաւոր՝ մարդիկ թէ դու։

Խեղճ Անդունց Սողի։ նա իր սրտի մուրազին չը
հասաւ, նա էլ շատերի պէս հեռացաւ ալս աշխար-
հից բեկմուրազ։

Մի անգամ Սողին արածացնում էր իրանց տաւարը
Հուռի աղբը գաշտավայրում։ Նա մենակ. էր ընկերնե-
րից երկուսը գնացել էին Ամենափրկիչի ձորն այստեղ
կորած տաւար փնտաելու։ Նուտով նոյն տեղն իրանց
տաւարն արածացներու բերան մօտիկ թուրք դշլազի⁸⁶⁾
տաւարածները, թւով երեք հոգի, ոտից մինչև գլուխ
սպառազինուած։ Սողին պարկած էր կանաչ խոտերի
մէջ, երբ թուրքերին նկատեց, նա իսկոյն կանգնեց տե-
ղից, հազրեց իր գագանակն ու սպասողական դերք բըռ-

86) Գիւղի։

նեց. նա գիտէր, որ թուրքերն առանց կռուի չեն կորչելու, ուստի շտապեց հրետին իր գլխի ճարը տեսնել: Թուրքերի տաւարը գնում էին Սողու տաւարի հետ խառնուելու. նա նրանց առաջը կտրեց ու ետ դարձրեց:

— Ո՛ հայ, ինչ բանի ես,—ձայն տուեց թուրքերից մինը, — էդ տաւարի առաջ իսբ ես կտրում:

— Լաւ եմ անում, — պատասխանեց Սողին:

— Ո՞նց ես լաւ անում. էս արօտատեղին մենակձերն ամ, — հարցրեց թուրքը. միւս երկուսը մօտեցան նրան:

— Հա, մերն ամ, — պատասխանեց Սողին, — բա դու էդ ըս գիտես, որ հախը հարցնէք, ալէտքա ձեզ թակելով այստեղից դուքս անել:

— Հա, հա, հա, հա, — ծիծաղեց թուրքերից մի ուրիշը, դու էլ կարող ես թակել:

— Աչքդ էլ չեմ հանիլ, — պատասխանեց Սողին:

— Ինչո՞վ:

— Հրէս է, այս դագանակով, — ասաց Սողին, ձեռնափայտը ցոյց տալով նրան:

— Բա հարամ չի լինիլ մեր կերտծը, որ մեզ մարդ թակի. էն էլ ով, մի հայի յակմտ, — ասաց թուրքը:

— Լակոտը դու ես, զուն հարամդադա, — ասաց Սողին:

— Ձէնդ կտրի, անհաւատ, — պատասխանեց թուրքը:

— Ո՞վ ա անհաւատ, ես, — գոռաց Սողին ու մոլն. չալով վազեց դէպի թուրքը, որի կարկաժին մի քանի անգամ իրար ետևից իջեցրեց դագանակը. թուրքն արիւնլըւիկ ընկաւ տեղն ու տեղը: Նրա միւս երկու ընկերները մօտ վազեցին, ու սկսուեց կատարեալ կրիւ նրանց ու Սողու մէջ. կաիւն անհաւասար էր ու անողորմ: Սողու վրայ կարկուտի պէս թափւում էին հարուածներ, բայց նա մի ըոպէաչափ անգամ չէր ընկճում, մի քալլ անգամ յետ չէր նահանջում: Նա ընդհատ շարժում էր իր դագանակը վեր ու վայր ու անինալ զփում իր հակառակներին. երբեմն երկումին միասին առաջ էր դնում ու բաւականին տեղ քը շում, բայց նրանց էլ յաջողլում էր հարուած հասցնել

Սողուն ու գժուարութեան մէջ զցել նրան։ Թուրքերի գլուխների վրայ էլ սաղ տեղ չէր մնացել. նրանց երեսներն ու շորերը նախշուել էին արիւնով. Էնա հաբաւական էր, որ նրանցից մէկն էլ ընկնէր ու շնաթաւիլ տար, որ Սողին միւսին բոլորովին ջարդ ու փշուր անէր ու վերջը երկուսին էլ կատարեալ մէլիդ⁸⁷⁾ զցէր։ Կռուի թունդ ժամանակ ընկած թուրքը, փորսող տալով, աննկատելի կերպով մօտեցաւ Սողուն, լանկարծ կանգնեց տեղից ու նամարդութեամբ խանչալը խրեց նրա կողքը։ Անսպասելի էր հարուածը. սաստիկ էր ցաւը. «վայ, ես մեռար, — բացականչեց Սողին ու տեղն ու տեղը մերձիմահ ընկաւ. Թուրքերը թողեցին նրան ալդպէս ընկած, շտապով հաւաքեցին իրանց տաւարը, առաջ քշեցին նրանց ու փախան դշլաղը։ Սողին արիւնաքամ էր լինում. չը կար մէկը, որը փաթաթէր նրա վէրքն ու կանգնեցնէր ալիւնը. երկար նա թաւալում էր ընկած տեղն ու խորը հառանչ քաշում. չորս կողմի խոտերն ու ծաղիկները ներկուել էին արիւնով։

Այդ միջոցին Ամենափրկչի ձորից վերադարձաւ նրա մտերիմ կեափունց Բեդին։ Նկատելով Սողուն ալդ դրութեան մէջ, նա սարսափած մօտ վազեց նրան ու ընկաւ նրա մօտ ծնկաչոգ։ Նա խկոյն հասկացաւ բանն ինչումն է. երկար նա չէր կարսղանում իրան հաւաքել ու խօսել. արտասուրքը խեղդում էր նրան։ Վերջապէս նա հարցըց՝ «ա Սող, քե մատաղ, էդ ով քեզ եարալու արաւ,⁸⁸⁾ ում հետ կռուեցիր»։

Սողին գժուարութեամբ էր խօսում. մի կերպ նա ասաց. «բալամ, որ զփեցի...»։

— Արա, ում զփեցիր, ասա, քո ջանին մատաղգը. նամ, հարցըց Բեդին։

— Թուրքին, ա Բեդ.... նա խանչալը կոխեց կողքըս, ամա ես նրան լաւ զփեցի, — ասաց Սողին։

— Արա, ինչի համար, ինչ պատահեց, — հարցըց Բեդին։ Սողին ոյժ չունէր խօսելու. Բեդին մի երկու անգամ էլ կրկնեց իւր հարցը։

⁸⁷⁾ Դիակ։ ⁸⁸⁾ Վիրաւորեց։

—Ենա, բալամ, որ զփեցի.... շատ թուլ ձախով
մըմնջաց Սողին, խորը հառաչ քաշեց ու փակեց աչքե-
րը. Զփողն ալլևս չըկար. Բեղին, աղիողորմ արցունք
թափելով, ընկաւ նրա անշնչացած դիակի վրալ:

Ալդպէս ալս անցաւոր աշխարհից, դեռ իր սրտի
մուրազին չըհասած, դեռ սեփական հրացան ու շողշո-
դուն փամփուշտներ չը տեսած, անհետացաւ Մածնա-
բերդցի Անդունց Սողին, ալդ լանդուգն ու համարձակ
զփողը:

ՄՃԵՓԱՆ ԱԻԵՑԻՔԵԱՆ-ԲԱՆԱՆՑԵՑԻ

